

378

J-11

19330

А 775

120-10

Հ Ս Խ Հ ԼՈՒՍԺԱՂԿԱՄԱՏ. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԿԱՆ ՍԵՎՏՈՐ

378

2-11

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Հ Ս Խ Հ ԲՈՒՅԵՐԻ ՑԵՎ ԲՏՈՒՅՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. Հայոց լեզու
2. Ռուսաց լեզու
3. Հասարակագիտություն
4. Մաթեմատիկա
5. Ֆիզիկա
6. Գիմիա

378.

2-11

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1933

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

1. Բանավոր և գրավոր խոսք. — Ճիշտ և սահուն ընթերցանություն: Ուղղագրական և շարահյուսական ճիշտ կանոններով գրել շարադրութ. ունենալ քաղաքական, գրական ու այլ թեմաների մասին:

2. Քերականություն. — Գաղափար խոսքի մասերի մասին:

Գոյական անուն, նրա տեսակները:

Գոյականների հոլովումը:

Ուղիղ խնդիր և հայցական հոլով (գործողության առարկայի գաղափարի կապակցությամբ). հոլովման ի, ու, եմ, յան, վա, ոչ, որ, ց ձևերը. տարրական գաղափար գրաբարից վերցրած շատ գործածական հոլովական ձևերի մասին:

Մակրայներ և նրանց տարբերությունը:

Բայ. գաղափար դերբայի մասին. անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար և յենթական դերբայներ:

Ռժանդակ բայի խոնարհումն անկատար, ներկա և անցյալ ժամանակներով: Սահմանական յեղանակի բոլոր ժամանակները. բղձական, յենթադրական և հարկադրական յեղանակները:

Թվական անուն (քանակական և դասական). թվական անունների ուղղագրությունը (բորդ և երորդ ածանցներ):

Դերանունները (անձնական, ստացական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական և անորոշ) և նրանց հոլովումը:

Դիմորոշ հոդեր:

Պատ. խմբագիր՝ Մանթրոսյան

Տեխ. խմբ. Գ. Զեմյան

Սրբագրիչ՝ Զ. Սառիկյան

Հանձնված և արտադրության 15 հուլիսի 1933 թ.

Մատրագրված և ապագրելու 2 ոգոստոսի 1933 թ.

Պետքատի տպարան Գլավլիտ 8341 Հրատ. № 2670 Պատվեր № 1679 Տիրած 1000

ИНСТИТУТ
ВОСТОЧЕВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Նախադրութիւններ (առանց, դեպի և այլն) և հետադրութիւններ (մասին, համար և այլն), սրանց խնդրառութիւնը:

Շաղկապ (համադասական և ստորադասական):

Չայնարկութիւն:

Խոսքի մասերի փոխադարձ փոխանցումներ (գոյականի վերածումն ածականի և ընդհակառակը՝ բայի վերածումը գոյականի, ածականի և այլն):

Հնչյունափոխութեան բոլոր դեպքերը (հնչյունափոխութիւնը, վորպես շեշտի փոփոխութեան հետեւանք). ք և կ ուղղագրութիւնը բառաւերջում. բառակազմութեան ավելի բարդ ձևերը (յենթ, մակ, տրամ, նախածանցներով և ածանցական բառերով):

Լեզուն և մտածողութիւնը՝ հակադրութիւնների միասնութիւն. (ձև և բովանդակութիւն, մատերիա և շարժում—) խոսքը մտածողութեան կոնկրետ դրսևորումն և բառերով: Նախադասութիւնն իբրև խոսքի քերականորեն ձևավորված կոնկրետ միավոր:

Շարահյուսութիւնը, վորպես նախադասութիւնների կառուցվածքի և կապակցութեան ուսմունք, յենթական և ստորոգյալը նախադասութեան անդամներ— (բեւոներ, վորոնց չուրջը համախմբվում են նախադասութեան մյուս անդամները). յենթական լրացնող (կոնկրետացնող) անդամներ (վորոչիչ, բացահայտիչ և հատկացուցիչ). հոլովներ. ստորոգյալը լրացնող (կոնկրետացնող) անդամներ (պարագաներ, խնդիրներ) և խնդրի հոլովներ. բայի սեռը (չեզոք, ներգործական կրավորական և կրավորակերպ). ստորոգյալի անմիջական լրացումը հայցական հոլովով. նախադրութիւններ և հետադրութիւններ. սրանց հոլովական խնդրառութիւնը:

Նախադասութեան տիպերը (պարզ, ընդարձակ, միավորյալ և բարդ):

Պարզ նախադասութիւն՝ բաղկացած յենթակայից և ստորոգյալից. ընդարձակ նախադասութիւն՝ բաղկացած յենթակայից, ստորոգյալից և լրացումներից.

բարդ նախադասութեան անդամներից մեկը կամ մի քանիսն արտահայտվում են առանձին (յերկրորդական) նախադասութեամբ: Միավորյալ նախադասութիւնը կազմված է մի յենթակայից և մի քանի ստորոգյալից, կամ մի ստորոգյալից և մի քանի յենթականներից. նա միավորում է մի քանի նախադասութիւն: Բարդ և միավորյալ նախադասութիւնները կարող են վերածվել համադասարան քանակով սարդ նախադասութիւնների:

Նախադասութիւնների ստորադասական կապակցութիւնը. գլխավոր և յերկրորդական նախադասութիւն. առաջադաս, միջադաս և վերջադաս յերկրորդական նախադասութիւն. հարաբերական դերանունների գործածութիւնը:

Նախադասութիւնների համադասական կապակցութիւնը, համադաս և ստորադաս նախադասութիւններ. շաղկապների գործածութիւնը համադաս նախադասութիւնների միջև:

Միջանկյալ բառեր և նախադասութիւններ:

Անենթակա նախադասութիւններ՝ կազմված բայի անորոշ յեղանակով և անստորոգյալ նախադասութիւններ. սրանց դերը և տեղը:

Տրամաբանական շեշտը նախադասութեան մեջ և նրա դերը:

Կետադրութեան, առդանութեան, տրոհութեան և բացահայտութեան նշաններ:



56708.66

РУССКИЙ ЯЗЫК

1. Устная и письменная речь

Уметь связно и свободно читать художественные, научно-популярные и общественно-политические произведения.

Уметь передавать краткое содержание прочитанного.

Умение связно передавать о слышанном и виденном.

Умение писать под диктовку простые и несложные статьи с соблюдением правил пунктуации. (точка, запятая, двоеточие, вопрос. и восклиц. знаки) и правописания. Письменная передача своих впечатлений и письменный пересказ о прочитанном.

2. Грамматика и правописание

Части речи.

Имена существительные. Их роды, числа. Склонение имен существительных.

Имена прилагательные: относительные и качественные. Степени сравнения. Роды имен прилагательных. Полная и краткая форма имен прилагательных. Склонение имен прилагательных.

Имена числительные.

Имена числительные-количественные и порядковые.

Местоимения (личные, возвратные, указат. и т. д.) и их склонение.

Глаголы: наклонения, виды, залоги. Спряжение глаголов.

Причастие и деепричастие.

Наречие.

Союз.

Междометие.

Предлоги. Их употребление.

Правописание имен прилагательных, числительных, местоимений с существительными. Правописание глаголов. Употребление «ь» в глаголах.

Понятие о простом и сложном предложении. Части предложения. Придаточные предложения, сокращенные и полные. Понятие о пунктуации. Употребление знаков препинания.

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Հասկացողություն արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների մասին: Քաղաքատնտեսության բնորոշումը լայն և նեղ առումով:

Հիմնական պարբերությունն ու կապը պարզ ապրանքային և կապիտալիստական արտադրության միջև: Սպառողական արժեք և փոխանակային արժեք: Կոնկրետ և արստրակտ, անհատական և հասարակականորեն անհրաժեշտ աշխատանք: Արժեքի ձևն իր պատմական և տրամաբանական զարգացման առումով: Արժեքը, վորպես ապրանքային տնտեսության շարժման որոնք: Ապրանքային ֆեոդիզիզմ: Արժեքային տեսության իդեալիստական և մեխանիստական մեկնարանությունը:

Դրամի ֆունկցիան: Ապրանքաշրջանառության ֆորմուլան Ա.-Փ.-Ա.: Խորհրդային դրամի բնույթը: Դրամի անհրաժեշտությունը ներկա ետապում:

Պարզ ապրանքային տնտեսության վերածումը կապիտալիստականի: Կապիտալի ֆորմուլան Փ.-Ա.-Փ., սրա հակասությունը: Բանվորական ուժը, վորպես հատուկ ապրանք: Աշխատանքի պրոդեար և արժեքի ավելացման պրոդեար: Մարքսի կողմից կապիտալի բաժանումը հաստատուն և փոփոխուն կապիտալի. սրա հեղափոխական դերն ու նշանակությունը: Բաղարձակ և հարաբերական հավելյալ արժեքի դիալեկտիկական փոխապդեցությունը. վարձու աշխատանքի, հավելյալ արժեքի և կապիտալի-առհասարակ կապիտալիստական կատեգորիաների անկիրառելիությունը ԽՍՀՄ-ում: Արժեքը և բանվորական ուժի դերը: Անվանական և իրական աշ-

խատաժարձը: Աշխատաժարձի ձևերը: Աշխատաժարձի բնույթը ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ-ում կիրառվող գործարքային սխեման սկզբունքային տարբերությունը կապիտալիզմի պայմաններում կիրառվող գործարքային սխեմայից:

Կապիտալիստական հարաբերությունների հասարակ և լայնացրած վերարտադրություն: Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնացման (կոնցենտրացիայի և ցենտրալիզացիայի) պրոցեսը: Բանվոր դասակարգի բացարձակ և հարաբերական աղքատացումը: Սոցիալիստական հարաբերությունների լայնացրած վերարտադրություն ԽՍՀՄ-ում: Շահույթի նորմաներ վորոշող գործոնները: Արտադրանքի գինը, վորպես արժեքի փոխակերպված ձև: Շահույթի նորմաների աստիճանական անկման ձգտումը. գների վորոշման և գների քաղաքականության սկզբունքային տարբերիչ բնույթը ԽՍՀՄ-ում:

Հասկացողություն առևտրական կապիտալի և առևտրական շահույթի մասին: Խորհրդային առևտրի բնույթը և նրա նշանակությունը ներկա ետապում:

Համ Կ(բ)Կ-ի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումները կոլտնտեսական առևտրի մասին: Խորհրդային վարկի սկզբունքային տարբերությունը կապիտալիստական վարկից: Տնտեսաշվարկի և ուրբու վերահսկողության նշանակությունը: Սոցիալիստական շինարարության բարձր տեմպերն ապահովելու համար միջոցների մոբիլիզացիայի նշանակությունը: Հասկացողություն հողային ռենտայի և կապիտալիզմի զարգացման բնույթի մասին՝ գյուղատնտեսության մեջ: Հողերի ազգայնացումը ԽՍՀՄ-ում և ռենտայի վոչնչացումը:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը վորպես գյուղի և քաղաքի միջև բնկած հակասությունների վերացման ուղի: Հասարակական կապիտալի վերարտադրություն: Արտադրության միջոցների արտադրություն և սպառման միջոցների արտադրություն: Հասարակ վերարտադրություն և լայնացրած վերար-

տադրություն: Կապիտալիստական յերկրներում տեղի ունեցող ճգնաժամերը նրանց պատճառները և հետևանքը: Ճգնաժամերի հնարավորության բացակայումը ԽՍՀՄ-ում: Մեր տնտեսական զգվարությունների բնույթը և նրանց աստիճանական վերացման ճանապարհը:

Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի բարձրագույն փուլը: Իմպերիալիզմի հինգ հատկանիշները: Մրցման աննախընթաց աճումն ու ուժեղացումը՝ մենաշնորհների տիրապետության շնորհիվ: Կապիտալիզմի անհամաչափ զարգացման որենքը և այս անհամաչափության սրումն իմպերիալիզմի պայմաններում:

Լենինի և Ստալինի ուսմունքը սոցիալիզմի հաղթանակի մասին՝ մի յերկրում:

Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի վերջին ետապ. կապիտալիզմի կործանման, քայքայման և անկման արտահայտությունները իմպերիալիզմի ետապում: Իմպերիալիզմը վորպես պրոլետարական հեղափոխության նախորդակ Կ. Կառուցելու «Ուլտրա իմպերիալիզմի» սոցիալ-Փաշիստական տեսությունը: Բոլխարինի «Կազմակերպված կապիտալիզմի» տեսությունը:

Հետ-պատերազմյան ճգնաժամի յերեք փուլերի բնութագրերը: Համաշխարհային տնտեսական ներկա ճգնաժամը և նրա յուրահատկությունը:

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻՑ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի ուսմունքը կոմունիզմի, սոցիալիզմի և անցողիկ չրջանի մասին: Լենինը և Ստալինը պրոլետարական դիկտատուրայի սխեման մասին:

Լենինի և Ստալինի ուսմունքը ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու մասին և այդ խնդրում տրոցկիզմի ու աջ ոպորտունիզմի հակահեղափոխական հայացքների քննադատությունը:

Յերկրորդ հնգամյակը վորպես ԽՍՀՄ-ում անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու ծրագիրը:

ԽՍՀՄ-ի տնտեսությունը վորպես փոխանցման շրջանի տնտեսություն: Պրոլետարական դիկտատուրայի տնտեսական քաղաքականությունը 1917—1918 թվի ընթացքում: Ռազմական կոմունիզմի ելույթը:

Նոր տնտեսական քաղաքականության (ՆԵՊ-ի) ելույթը և նրա մեկնարանումը տրոցկիստների, բուրժուական ռեստավրատորների ու աջ ռպորտունիստների կողմից: ՆԵՊ-ի վերականգնման շրջանը բնորոշող գլխավոր մոմենտները. վերակառուցման ՆԵՊ-ի վերջին եռապը վորպես սոցիալիզմի շրջանը թևակոխելու ետապ:

Կապիտալիստական ինդուստրացում և սոցիալիստական ինդուստրացում: Սոցիալիստական ինդուստրացման աղբյուրներ: Խոշոր մեքենայական ինդուստրիան վորպես սոցիալիզմի հիմնական նյութական բազա: Սոցիալիստական ինդուստրացման հնարավոր և անհրաժեշտ արագ տեմպը: Առաջավոր կապիտալիստական յերկրներին տնտեսապես և տեխնիկապես «հասնելու և անցնելու» խնդիրը:

Կուսակցության 14-րդ և 15-րդ համագումարները ժողտնտեսության վերակառուցման ուղիների մասին: 16-րդ կուս կոնֆերենցիան ժող.—տնտեսության առաջին հնգամյակի մասին: Հնգամյակը, վորպես ինդուստրացման կոնկրետ պլան: Սոցիալիզմի հիմքի կառուցումը, ԽՍՀՄ-ի՝ սոցիալիզմի շրջանը թեյևակոխելն ու «Ուլ-ում» հարցի լուծումը հոգուտ սոցիալիզմի: Յերկրի ինդուստրացումը և պայքար հանուն ԽՍՀՄ իւության տնտեսական անկախության: Սոց. ինդուստրացումն իրրե հզորագույն խթան ԽՍՀՄ-ի նախկին հետամնաց շրջանների տնտեսական և կուլտուրական վերելքի: Պայքար տեխնիկայի տիրապետման համար: Ստալինի պատմական վեց ցուցմունքները, վորպես պայքարի ծրագիր սոցիալիստական շինարարության հաղթանակի կազմակերպման գործում:

17-րդ կուսկոնֆերենցիան առաջին հնգամյակի արդյունքների մասին: Հունվարյան պլենումը: Առաջին

հնգամյակի հանրագումարները: Հունվարյան պլենումը յերկրորդ հնգամյակի առաջին տարվա աշխատանքների մասին:

Լենինյան կոոպերատիվ պլանը վորպես դյուղատնտեսությունը սոցիալիստորեն վերակառուցելու ուղի:

ԽՍՀՄ-ում գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու անհնարինության տրոցկիստական բուրժուական տեսությունը: Աջ ռպորտունիզմի կուլակային դիծը ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության զարգացման հարցում: Խորհ.—տնտեսությունները, վորպես առաջատար լծակներ և ամուր հենարան գյուղատնտեսության ռեկոնստրուկցիայի գործում: ՄՏԿայանները վորպես կուլտնտեսական չարժումը դեկավարելու պրոլետարական լծակներ: ՄՏԿ-ների քաղաթիւները, նրանց դերն ու նշանակությունը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Գյուղացիության հիմնական մասսաների դեպի սոցիալիզմը կատարած շրջադարձն ապահովող և նախապատրաստող պայմանները: Կուլակային տարրերին սահմանափակելու և սեղմելու քաղաքականությունից կուսակցությունն անցնում է կուլակության իրրե դասակարգի վերացման քաղաքականության՝ համատարած կոլեկտիվացման բազայի վրա: Գյուղատնտեսության մարզում «Ուլ-ում» հարցի լուծումը հոգուտ սոցիալիզմի:

Դասակարգային ուժերի տեղաշարժերը ԽՍՀՄ-ի սոց. շինարարության տարրեր հտապներում: Դասակարգային պայքարի սրման պատճառները և նրա ձևերը ներկա հտապում: Կուսակցության՝ յերկու Փրոնտում մղած պայքարը վորպես անհրաժեշտ նախապայման սոցիալիստական շինարարության նվաճումների: Կուլտնտեսությունների սոցիալական բնույթը և կուլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման հարցը:

Կուսակցության և կառավարության վորոշումները

կոլտնտեսութիւնները կազմակերպչորեն և տնտեսապես ամրացնելու, հացամթերումների և մսամթերումների, կոլտնտեսական առևտրի զարգացման, հեղափոխական որինականութիւն և հանրային գույքի պահպանման մասին:

Աշխատանքի սոցիալիստական կազմակերպումը. սոցմրցում և հարվածայնութիւն: Պրոֆմիութիւններ ղերն ու նշանակութիւնը ԽՍՀՄ-ում:

Պրոֆմիութիւնների Ծ-րդ համագումարի վորոշումները պրոֆմիութեանական աշխատանքի ներկա ետապի հիմնական մարզերի և խնդիրների մասին:

Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրները: Բանվոր դասակարգի հատուկ ղերն ընդհանրապես դասակարգերի վերացման գործում:

Աշխատավորութիւն սոցիալիստական վերադաստիարակութիւն: Պայքար սոցիալիզմի գաղափարի սահմանափակ, նեղ սպառողական հասկացողութիւն ղեմ: Կուսակցութիւն և կուսդեկավարութիւն ղերն անդատակարգ հասարակութիւն կառուցելու գործում: Պայքար հանուն կուսակցութիւն գլխավոր գծի՝ ներկա ետապում:

Յերկրորդ հնգամյակի տնտեսական խնդիրները: Ժողովրդական վողջ տնտեսութիւն ձեկոնստրուկցիան: Սոցիալիստական ինդուստրացման տեմպի խնդիրը յերկրորդ հնգամյակում: Սորհրդային մեքենաշինարարութիւն առաջատար ղերը. եներգետիկ բազան. գունավոր և սև մետալուրգիայի հարցերը: Յերկրի քիմիացումը. տրանսպորտի վերակառուցումը:

Ցանքսի բերքատվութիւն բարձրացումը. պայքար յերաշտի ղեմ: Անասնապահական պրորլեմը: Գյուղատնտեսութիւն սոցիալիստական վերակառուցման ավարտումը:

Գյուղատնտեսութիւն մասնագիտացումը և արդյունարերութիւն սոցիալիստական տեղաբաշխումը:

Թեթև և սննդային արդյունարերութիւն ղարգացումը:

Ապրանքաշրջանառութիւն ղարգացումը: Պայքար սոց. շինարարութիւն ներկա ետապում, ապրանքաշրջանառութիւն և դրամի մահացման «ծախ» տեսութիւնների ղեմ: Պայքար տնտհաշվարկի բուրժուանական մի կնքանութիւն ղեմ: Ժողովրդական տնտեսութիւն սոցիալիստական վերակառուցումն ավարտելու ղերն ու նշանակութիւնը, դասակարգերի լիկվիդացիայի, կապիտալիզմի մնացորդների վերացման գործում՝ ինչպես տնտեսութիւն, նույնպես և մարդկային գիտակցութիւն մեջ:

Յերկրորդ հնգամյակը և յերկրի պաշտպանութիւն ուժեղացման խնդիրները:

Յերկրորդ հնգամյակի միջազգային նշանակութիւնը:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՀԱՄ Կ(Բ)Կ-Ի ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատմութիւնը վորպես դասակարգային պայքարի պատմութիւն:

Անդասակարգ հասարակութիւն ընդհանուր բնութագիրը և նախնադարյան կոմունիզմի քայքայման պատճառները: Անտիկ աշխարհի սոցիալ-տնտեսական բնութագիրը (Հունաստան և Հռոմ), անտիկ աշխարհը, վորպես ստրկատիրական հասարակական ֆորմացիա:

Ֆեոդալիզմը վորպես հասարակական ֆորմացիա:

Ֆեոդալիզմի ծագումն ու ղարգացումը Արեւմտյան Յեւրոպայում: Ֆեոդալիզմի առաջացումն ու ղարգացումը Հյուսիս-Արեւելյան Ռուսաստանում: 12-15-րդ դարերի Արեւմտ-յեւրոպական ֆեոդալական կարգերի ընդհանուր բնութագիրը:

Նախնական կուտակման ղարաշրջանի բնութագիրը: 16-րդ դարի գյուղացիական պատերազմը Գերմանիայում:

16-17-րդ դարերի գյուղացիական պատերազմներ Ֆեոդալ-ծորտատիրական Ռուսաստանում:

17-րդ դարի անգլիական հեղափոխությունը:

18-րդ դարի ճորտատիրական տնտեսությունը և դասակարգային հակասությունները Ռուսաստանում: Պուզաշովչինա:

Արդյունաբերական կապտալիզմ. կապիտալիզմը, վորպես սոցիալ-տնտեսական ֆորմացիա:

Արդյունաբերական հեղաշրջումն Անգլիայում և նոր ֆորմացիայի անցման հարկադրական բնույթը: Ֆրանսիական մեծ հեղափոխությունը վորպես բուրժուական կլասիկ հեղափոխություն և նրա պատմական նշանակությունը: Ֆրանսիական մեծ հեղափոխության պատճառներն ու շարժիչ ուժերը: Մանր բուրժուազիայի դեր-տատուրան և նրա քաղաքականությունը: Նապոլեոնական Ֆրանսիան և Բուրբոնների ռեստավրացիան: Անգլիայի տնտեսական զարգացումն ու քաղաքական կարգե-րը 19-րդ դարի առաջին կիսում: Չարտիստական շար-ժումը: Ֆրանսիայի տնտեսությունը, քաղաքական կար-դը և դասակարգային հակասությունները հուլիսյան մի-ապետության շրջանում (1830—48 թ.): 1848 թվի փե-տրվ. հեղափոխությունը. հունիսյան որերի պատմական նշանակությունը: Լուի Բոնապարտի պետական հեղա-շրջումը: Գերմանիայի տնտեսական զարգացման աստի-ճանը և քաղաքական կարգերը 19-րդ դարի առաջին կի-սին: 1848 թվի մարտի հեղափոխությունը: Մարքսի և Ենգելսի դերը 1848 թվի հեղափոխության մեջ: Ազատա-գրական պատերազմը (18-րդ դարում) հանուն անկախու-թյան և քաղաքացիական պատերազմը (1861—65 թ.) Ամերիկայում:

Ճորտատիրական տնտեսության քայքայումը և դա-սակարգային պայքարը Ռուսաստանում՝ 19-րդ դարի առաջին կիսում: Դեկաբրիստների շարժման նշանակու-թյունը: 60-ական թվականների ռեֆորմը Ռուսաստա-նում և արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացումը հետևեֆորմյան շրջանում: Հեղափոխական նարոդնիկության նշանակությունը և նարոդնիկական շարժման անհաջողության պատճառները: Բանվորական

շարժման առաջին քայլերը Ռուսաստանում՝ 19-րդ դարի 70-ական թվականներին:

50—60-ական թվականների բանվորական շարժման ընդհանուր բնութագիրը Գերմանիայում, Ֆրանսիայում և Անգլիայում:

Առաջին ինտերնացիոնալի կազմակերպումը և նրա գործունեյության հիմնական եռապները: Մարքսի դերն առաջին ինտերնացիոնալում: Առաջին ինտերնացիոնալի պատմական նշանակությունը:

Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական զարգացումը և քաղաքական կարգը յերկրորդ կայսրության շրջանում: Յերկրորդ կայսրության անկումը և 1871 թ. մարտի 18-ի հեղափոխությունը: Փարիզյան կոմունան վորպես պետության նոր տիպ, վորպես պրոլետարական դիկտա-տուրայի հաստատման սաղմը և առաջին փորձը: Կոմունայի դասերը և նրա պարտության պատճառները:

Յեվրոպայի և Ամերիկայի կապիտալիստական զար-գացման ընդհանուր գծերը և միջազգային բանվորական շարժումը 19-րդ դարի վերջին քառորդում:

Նախապատերազմյան իմպերիալիզմի ընդհանուր բնութագիրը: Հեղափոխական Պ. ռպորտունիստական հոսանքների պայքարը յերկրորդ ինտերնացիոնալում՝ նախապատերազմյան եպոխայում:

Գերմանիայի տնտեսական զարգացումն ու քաղաքա-կան կարգը մինչ համաշխարհային պատերազմը: Գեր-մանիայի բանվորական շարժման բնույթը: Հոսանքնե-րի պայքարը Գերմանիայի սոց. դեմոկ. ներսում: Կենտրոնի և ձախ ռադիկալիզմի բնութագիրը: Ոպոր-տունիզմի սոցիալական արժատները նախապատե-րազմ. գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ներսում: 1914 թվի ոգոստ. 14-ի դավաճանությունը և այդ դա-վաճանությամբ գերմանական սոց.-դեմոկրատ. կատա-րած եվոլյուցիան սոցիալ չովինիզմի ուղիներով դեպի սոցիալ ֆաշիզմը:

Ֆրանսիայի սոց.-տնտեսական զարգացումը և քա-ղաքական կարգը մինչ համաշխարհային պատերազմը:

Բանվորական շարժման բնույթը: Ոպորտունիզմի և սինդիկալիզմի արմատները Փրանսիական բանվորական շարժման ներսում:

Անգլիայի սոցիալ-տնտեսական զարգացումը և քաղաքական կարգը մինչ համաշխարհային պատերազմը: Բանվորական շարժման բնույթը: Ոպորտունիզմի արմատները Անգլիայի բանվորական շարժման ներսում և առհասարակ նրա սոցիալիստական շարժման թուլության պատճառները:

Ամերիկայի սոցիալ-տնտեսական զարգացումը և քաղաքական կարգը մինչ համաշխարհային պատերազմը: Ոպորտունիզմի արմատները և բանվորական շարժման թուլության պատճառները իՍՂՄ-ում:

Բանվորական շարժումը պատերազմի ժամանակ և Յերկրորդ Ինտերնացիոնալի սնանկացումը:

Ռուսաստանի սոցիալ տնտեսական այն միջավայրը, վորի պայմաններում առաջացավ և ձևավորվեց բոլշևիզմը: 90-ական թվականների և հին «Իսկրա»-ի ժամանակաշրջանում Լենինի վարած պայքարը՝ հանուն նոր տիպի կուսակցության ստեղծման և այդ պայքարի միջազգային նշանակությունը: Լենինն ընդդեմ լեզալ մարքսիզմի և եկոնոմիզմի:

ՌՄԴԻԿ ներսում բոլշևիկների առաջ բերած պառակտման միջազգային նշանակությունը:

1905-907 թ. հեղափոխությունը, նրա յուրահատկությունը եպոխայի տեսակետից, հեղափոխություն բնույթը, շարժիչ ուժերը և պայքարի մեթոդները: Լենինը բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերածելու մասին: Տրոցկու պերմանենտ հեղափոխություն տեսության հակահեղափոխական բնույթը: III համագումարի հիմնական վորոշումները և նրա միջազգային նշանակությունը: 1905-907 թվի հեղափոխության գլխավոր ետապները: Խորհուրդները վորպես ապստամբություն որդաններ և ապագա պետություն սաղմեր. 1905 թվի հեղափոխության պարտություն պատճառները: 1905-907 թ. հեղափոխության մի-

ջազգային նշանակությունը: Տեղաշարժեր դասակարգային ուժերի փոխհարաբերությունների ներսում՝ 1905-907 թ. հեղափոխությունից հետո: Հունիսի 3-ի ռեժիմը և ստոլիպինյան ռեժիմը: Բանվորական շարժման նոր վերելք: Պրազայի կոնֆերենցիան (1912 թ.) վորպես բալլաիկյան կուսակցություն վերջնական կազմակերպչական ձեւավորում: Բոլշևիկների և Լենինի պայքարը՝ ընդդեմ ոգոստոսյան լիկվիդատորական բլոկի:

Բոլշևիզմը համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1917): Յերկրորդ Ինտերնացիոնալի սնանկացումը, վորպես նրա ոպորտունիստական վերասերման հետևանք. պայքար ընդդեմ սոցիալ-չովինիզմի և դենտրիզմի, հանուն նոր՝ Յերրորդ Ինտերնացիոնալի ստեղծման: Յիմմերվալդն ու Կինտալը վորպես Յերրորդ Ինտերնացիոնալի ստեղծման ճանապարհին ընկած պայքարի ետապներ:

1917 թվի փետրվարյան հեղափոխություն բնույթը: Բոլշևիկների կուսակցությունը դերը վորպես փետրվարյան հեղափոխության կազմակերպչի ու ղեկավարի: Բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն վերածումը սոցիալիստականի: Լենինի ապրիլյան թեզիսները և ապրիլյան կոնֆերենցիան: Բոլշևիկների կուսակցությունը պայքարի առաջավոր դիրքերում՝ հանուն իշխանության գրավման (1917 թ.): Կուսակցության 6-րդ համագումարի վորոշումները: Հոկտեմբերյան ապստամբության կազմակերպումը բոլշևիկների կողմից և պայքար չորեքյերեխերություն դեմ: Հոկտեմբերյան հեղափոխության բնույթը և շարժիչ ուժերը: Փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխություն պատմություն խեղաթյուրումը տրոցկիստների, Ելյապինիկովի մյուսների կողմից:

Հոկտեմբերյան հեղափոխություն ազդեցությունը միջազգային հեղափոխական շարժման վրա՝ թե Արևմուտքում և թե Արևելքում: Հոկտեմբերյան առաջին դեկրետները: Լենինի և Խուսակցության պայքարը խա-

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

СССР
ЗУСН-Арм.ССР

դադության և դադարի համար: Կուսակցությունը, վորպես ղեկավար և կազմակերպիչ պրոլետարական դիկտատուրայի ամրացման համար մղվող պայքարում: Կուսակցության 8-րդ համագումարը բանվորա-գյուղացիական դաշինքի բնորոշման խնդրում: Լենինի, Ստալինի և Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի վարած պայքարը հանուն ազգային և դյուղացիական հարցերում տարվող ճիշտ քաղաքականության:

Յերկրի տնտեսական ու քաղաքական դրությունը քաղաքացիական պատերազմից հետո: Դիկտատուրաբանությունների մասին: Կուսակցության 10-րդ համագումարը ՆեՊ-ին անցնելու մասին: 1923 թվի տնտեսական ճգնաժամը և մանր բուրժուական տատանումների ուժեղացումը Կուսակցության ներսում: Տրոցկիստական պլատֆորմայի՝ բուրժուազիային անձնատուր լինելու ելությունը: 14-րդ Կուսկոնֆերենցիան և 14-րդ համագումարը մի յերկրում սոցիալիզմ կառուցելու մասին: ԽՍՀՄ-ի կազմակերպումը, վորպես ազգային հարցի լենինյան լուծման փայլուն օրինակ:

15-րդ Կուսհամագումարի և Կոմինտերնի 7-րդ պլենումի վերջումները տրոցկիստական ոպոզիցիայի մասին:

Աջ թեքման պլատֆորմը: Բուլչևիկյան հարձակման նշանակությունը: Ազգային հարցը 16-րդ համագումարում: Պայքար յերեւո Ֆրոնտի վրա՝ ազգային հարցում:



Յերրորդ Ինտերնացիոնալի ստեղծումն ու կազմակերպումը: Կոմինտերնի կազմակերպչական սկզբունքները: Կոմինտերնի քսան մեկ պայմանները: Լենինի թեզիսները բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին: Խորհուրդների միջազգային նշանակությունը: Ազգարային և ազգային-դադութային հարցերը Կոմինտերնի յերկրորդ կոնգրեսում: Կոմինտերնի յերրորդ կոնգրեսը հետպատերազմյան կապիտալիզմի զարգացման բնույթի մասին: Միասնական

Ֆրոնտի տակտիկան: Հետպատերազմյան յերկրորդ փուլի հիմնական գծերը և կապիտալիզմի ժամանակավոր հարաբերական կայունացման մասին Կոմինտերնի տված գնահատականը: Յերրորդ փուլի գնահատականը՝ տրված Կոմինտերնի 6-րդ կոնգրեսի կողմից: Կոմինտերնի 10 և 11 պլենումները: Կոմինտերնի ծրագիրը:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(Հասարակագիտության համար)

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Լապիդուս—Քաղաքատնտեսության ձեռնարկ—Հրատ—1933 թ.

2. Ա. Լեոնտե—Քաղաքատնտեսության ձեռնարկ—Հրատ—1933 թ.

4. Сегаль. Краткий курс политич. экономии.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՏՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴ

ԵԿՈՆՈՄԻԿ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Բոխանովսկու խմբագրությանը—ԽՍՀՄ-ի տնտես. քաղաքականության. Հրատ.—1932 թ.

2. Բերեզին—Տնտես. քաղաքականության. Հրատ 1932 թ.

Савельев. Сборник резолюций и постановл. ВКП (6 по хоз. вопросам.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր պատմության համար.—

1. Կոմունիստական մանիֆեստ

2. Բոչարով և մյուսները «Դասակարգային պայքարի պատմություն» 1-ին, 2-րդ և 3-րդ պրակներ (կարգալ նաև այս դասագրքի մասին գրած քննադատությանը):

3. Լենին—Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապ.

4. Ի. Ստալին—Լենինի գաղափարների հարցերը.

ԿՈՒՍՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Պոպով—Հրատ—1933 թ.

2. Կոմիսսարյով—Ծրագրեր

Մ Ա Թ Ե Մ Ա Տ Ի Կ Ա

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ թվերի թվաբանական չորս գործողությունները:

Հարցեր, վորոնց պատասխանում է թվաբանական չորս գործողություններից յուրաքանչյուրը: Գումարի, տարբերության, արտադրյալի և քանորդի փոփոխությունը՝ կախված տվյալների փոփոխությունից: Բանավոր և արագ հաշիվ: Գործողությունների ստուգումը:

Բաժանականության հատկանիշները 1-ի, 2-ի, 5-ի, 4-ի 9-ի և 3-ի համար: Բարդ թվերի վերլուծումը պարզ բազմապատկիչների: Ամենամեծ ընդհանուր բաժանարար և ամենափոքր բազմապատկի գտնելը:

Հասարակ կոտորակներ.—Թվի դադարարի զարգացումը:

Կոտորակային թվի ստացումը: Կոտորակների կրճատումը: Կոտորակներն ընդհանուր հայտարարի բերելը: Կոտորակների բաղադրումն ըստ մեծության: Կոտորակների չորս գործողությունները:

Տասնորդական կոտորակներ.— Տասնորդական կոտորակների չորս գործողությունները:

Տասնորդական կոտորակը դարձնել հասարակ և ընդհանրական:

Չափերի մետրական սխառնմբ.—

Հարաբերություններ և համեմատություններ.— Տարբերական—Հարաբերություն և տարբերական համեմատություն: Քանորդական հարաբերություն և քանորդական համեմատություն: Տարբերական և քանորդական համեմատությունների հիմնական հատկությունները:

ները: Ուղիղ և հակադարձ համեմատական մեծություններ: Անընդհատ համեմատություն: Միջին յերկրաչափական: Միջին թվաբանական:

Տոկոսներ. — Գտնել տվյալ թվի տոկոսը: Գտնել թիվը, յերբ տված է տոկոսը: Յերկու թվերի տոկոսային հարաբերությունը:

2. ՀԱՆՐԱՀԱՇԻՎ

Հարաբերական թվեր, մեծություններ, վորոնք ունեն հակադիր ուղղություններ:

Թվի գաղափարի ընդարձակումը: Հարաբերական թվերի բաղադրումը գերոյի և միմյանց հետ: Չորս գործողություններ-հարաբերական թվերի հետ: Ամբողջ հանրահալվական արտահայտություններ և նրանց նկատմամբ գործողություններ:

Հանրահալվական արտահայտությունների կրճատ բազմապատկումը և բաժանումը Փորձույաներով:

Բազմանդամների վերլուծումը բազմապատկիչների՝ ա) ընդհանուր բազմապատկիչը փակագծից դուրս բերելու յեղանակով, բ) խմբավորման յեղանակով, գ) կրճատ բազմապատկման յեղանակով:

Հանրահալվական կոտորակների ձևափոխությունը և նրանց գործողությունները:

Նույնություններ և հավասարումներ:

Առաջին աստիճանի՝ մեկ անհայտով թվային և տառային գործակիցներով հավասարումներ կազմելը և լուծելը: Թվային և տառային՝ առաջին աստիճանի հավասարումների սխստեմ կազմելը և լուծելը:

Արտադրյալի, աստիճանի և կոտորակի աստիճան բարձրացնելը:

Բազմանդամի քառակուսին:

Արժատ հանելու գործողությունը: գաղափար իրացրիոնայ թվի մասին: Թվի գաղափարի ընդարձակումը: Նշանների կանոնը՝ թվերից արժատ հանելիս: Ամբողջ թվերից, հասարակ և տասնորդական կոտորակներից քառակուսի արժատ հանելը: Մոտավոր ճշտությամբ արժատ հանելը: Գաղափար կեղծ թվի մասին:

Արտադրյալից, կոտորակից, աստիճանից արժատ հանելը: Իրրացրիոնայ արտահայտություններ և նրանց բոլոր գործողությունները:

Հայտարարն իրրացրիոնայությունից ազատելը:

Յերկրորդ աստիճանի՝ մեկ անհայտով թվային և տառային գործակիցներով հավասարումներ կազմելն ու լուծելը: Քառակուսի հավասարման արժատների հատկությունը և հետազոտումը: Բիկվադրատ հավասարումներ: Յերկրորդ աստիճանի հավասարումների սխտեմի կազմելն ու լուծելը:

Ֆունկցիաներ և գրաֆիկներ. — Հաստատուն և փոփոխական մեծություններ: Ֆունկցիոնայ կախում և նրա յերեք ձևերը՝ աղյուսակային, անալիտիկական և գրաֆիկական:

Ուղիղ և հակադարձ համեմատականություն: Համեմատականության գործակից:

Ուղղանկյուն կոորդինատների մեթոդը: Ուղիղ և հակադարձ համեմատականության գրաֆիկը: Համեմատականության գործակցի յեկրաչափական նշանակությունը: գծային ֆունկցիան $y=kx+b$ նրանց գրաֆիկը և հետազոտումը k և b յերկրաչափական նշանակությունը:

Յերկրորդ աստիճանի ֆունկցիաների գրաֆիկը և հետազոտումը:

Թվաբանական պրոգրեսիա և նրա թեորեմները:

Յերկրաչափական պրոգրեսիա և նրա թեորեմները:

Անվերջ նվազող յեկրաչափական պրոգրեսիա:

Ցուցիչի գաղափարի ընդհանրացումը գերն, բացասական և կոտորակ ցուցիչներ: Այդպիսի ցուցիչ ունեցող արտահայտությունների նկատմամբ յեղած գործողությունները:

Լոգարիթմներ և նրանց թեորեմները: Տասնորդական լոգարիթմներ: Աղյուսակների գործածությունը: Ցուցչային և լոգարիթմական հավասարումներ:

Միացումների տեսությունը՝ տեղափոխություն, կարգավորություն և զուգորդություն:

Նյութաոնի յերկանդամը:

3. ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

Աղեղի հատվածների գումարումը և հանումը:

Գաղափար անկյան մասին: Անկյունների գումարը և տարբերությունը:

Ուղիղ և կից անկյունների հատկությունը:

Յեռանկյուն (նրա միջնագիծը, բարձրությունը և անկյան կիսողը):

Յեռանկյունների տեսակներն՝ ըստ կողմերի և ըստ անկյունների:

Հավասարասրուն յեռանկյան հատկությունները:

Հավասար յեռանկյուններ: Յեռանկյունների հավասարության յերեք դեպքերը:

Ուղղանկյուն յեռանկյունների հավասարության դեպքերը: Յեռանկյան արտաքին անկյունը:

Կառուցման հիմնական խնդիրները:

Յեռանկյան կողմերի և անկյունների կապը:

Ուղղահայաց և թեք ուղիղների հատկությունը:

Կետերի յերկրաչափական տեղը՝ հատվածի միջնաուղղահայաց և անկյան կիսողը:

Ձուգահեռ ուղիղներ:

Ձուգահեռ և ուղղահայաց կողմեր ունեցող անկյունների հատկությունը:

Յեռանկյան և բաղմանկյան անկյունների գումարը:

Ձուգահեռակողմեր և տրապեցներ. նրա վերարելքայլ թեորեմները: Հատվածի բաժանումը մի քանի հավասար մասերի:

Շրջանագիծ, կենտրոնական անկյուններ, աղեղներ և նրանց ձգող լարերը: Շոչափողներ: Յեռանկյան ներգծած և արտագծած շրջանների կենտրոնը: Գաղափար անհամաչափելի հատվածների մասին:

Անկյունների չափումը՝ կենտրոնական, ներգծած, լարով և շոչափողով կազմված և արտագծած: Արտաքին կետից շրջանագծին շոչափող տանելը:

Համեմատական հատվածները և նրանց վերարելքայլ թեորեմները: Յեռանկյունների և բաղմանկյունների նմանությունը և նրանց վերարելքայլ թեորեմները:

Յեռանկյան ներքին և արտաքին անկյունների բխեկտրիսայի հատկությունը:

Ուղղանկյուն յեռանկյան մեջ չափական առնչություններ՝ ուղիղ անկյան գաղաթից ներքնագի վրա իջեցրած ուղղահայացի հատկությունը: Պիֆագորի թեորեմը: Յերկու հատվածների միջին համեմատականը:

Մի կետից տարած շոչափողի և հատողի հատկությունը: Կանոնավոր բաղմանկյուններ: Կանոնավոր բաղմանկյունների շրջանագծից ներգծելը և արտագծելը: Կանոնավոր բաղմանկյունների նմանությունը և նրանց պարագծերի հարաբերությունը:

Ներգծած կանոնավոր վեցանկյան, քառանկյան և յեռանկյան կողմի յերկարությունը: Կրկնապատկել կանոնավոր ներգծած բաղմանկյան կողմերի թիվը: Ձուգահեռակողմի, յեռանկյան, տրապեցի, և կանոնավոր բաղմանկյան մակերեսների չափումը: Հերոնի բանաձևը: Նման յեռանկյունների և բաղմանկյունների մակերեսների հարաբերության վերարելքայլ թեորեմը:

Գաղափար հաստատուն և փոփոխական մեծությունների մասին: Գաղափար սահմանի և անվերջ փոքրի մասին:

Շրջանագծի յերկարությունը վորպես սահման կանոնավոր ներգծած և արտագծած բաղմանկյունների: Շրջանագծի յերկարության բանաձևը: Թիվը. հասկացողություն նրա հաշվումի մասին: Շրջանի մակերեսը, վորպես սահման կանոնավոր ներգծած և արտագծած բաղմանկյունների:

4 ՏԱՐԱԾԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

Հարթության դիրքի վորոշումը: Հարթության ուղղահայաց և թեք գծեր: Ուղիղի և հարթության ուղղահայացություն հատկանիշը:

Յերեք ուղղահայացների թեորեմը:

Ձուգահեռ ուղիղներ և հարթություններ: Ուղիղի և հարթության զուգահեռություն հատկանիշը: Յերկու հարթությունների զուգահեռության հատկանիշը:

Յերկնիստ անկյուններ և զծային անկյուններ:
Յերկնիստ անկյան չափումը: Ուղղահայաց հարթու-
թյունների հատկանիշը:

Յերկու խաչվող ուղիղների անկյունը: Ուղիղ գծով
և հարթությունով կազմված անկյունը:

Բազմանիստ անկյուններ:

Պրիզմաներ: Պրիզմայի կողմնային մակերևույթը,
նրա նիստերի և անկյունագծերի հատկությունները,
ուղղանկյուն զուգահեռանիստ և նրա անկյունագծերի
ու յերեք չափումների կապը:

Բուրգ, նրա զուգահեռ կտրվածքների հատկու-
թյունը. կանոնավոր, լրիվ և հատված բուրգի կողմնա-
յին մակերևույթը:

Պրիզմայի և լրիվ ու հատված բուրգի ծավալը:

Գլանի ու կոնի կողմնային մակերևույթը և ծավա-
լը: Գնդի մակերևույթը և ծավալը:

5. ՅԵՌԱՆԿՈՒՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

Յեռանկյունաչափական ֆունկցիաներն ամեն տեսակի
անկյունների համար: Յեռանկյունաչափական ֆունկ-
ցիաների փոփոխությունը, յերբ անկյունը փոփոխվում
է 0-ից մինչև 360° :

Յեռանկյունաչափական ֆունկցիաների պարբերու-
թյունը, գրաֆիկը:

Միեռնոյն անկյան յեռանկյունաչափական ֆունկ-
ցիաների կախումն իրարից: Անկյան կառուցումը, յերբ
տրված է ֆունկցիայի թվական արժեքը:

Դրական և բացասական անկյուններ: Բացասական
արգումենտների ֆունկցիաներ: Անկյունների չափումը
յերկու յեղանակով: Ռադիան շառավղորդ: Վերածման
բանաձևերը: 30, 60 և 45 աստ. անկյունների ֆունկցիա-
ների հաշվումը:

Դուրսարման թեորեմը և նրա հետևանքները:

Կրկնակի և կես արգումենտների ֆունկցիաները:

Յեռանկյունաչափական ֆունկցիաները լողարիթ-
մական տեսքի բերելը: Ոժանդակ անկյան մոծումը լո-
գարիթմական տեսքի բերելիս:

Ստուգել նույնություններ և լուծել յեռանկյունա-
չափական հավասարումներ: Յեռանկյունաչափական
ֆունկցիաների լողարիթմական աղյուսակը և նրանց
գործածությունը:

Ուղանկյուն յեռանկյունների լուծումը:

Շեղանկյան Յեռանկյունների լուծում: Սինուսների
կոսինուսների ու տանգենսների թեորեմը: Յեռանկյան
մակերեսի վորոշումը՝ յերկու կողմերի և նրանց միջև
գտնվող անկյան միջոցով:

Շեղանկյուն յեռանկյունների լուծում Սինուսների.
ղեպքերը:

Շեղանկյուն յեռանկյան լուծման չորս հիմնական
ղեպքերը:

Յեռանկյան անկյան կեսի սինուսը, կոսինուսը և
տանգենս՝ արտահայտած յեռանկյան կողմերով:

Դրականություն. —

1. Киселов—Алгебра.

2. Шапошников и Вальцов—сборник алгеб-
раических задач ч.1-2

3. Կիսելով—Տարրական յերկրաչափություն մասն
1, 2 րդ.

4. Гурвиц и Гангнус—Геометрия ч. I и II.

5. Рыбкин—Сборник геометрических задач
ч. I и II.

6. Рыбкин—Учебник прямолинейной тригоно-
метрии.

ՖԻԶԻԿԱ

1. ՄԵԽԱՆԻԿԱ

1. Շարժման տեսակները: Հավասարաչափ ուղղա-
գիծ շարժում: Հավասարաչափ շարժման արագություն-
ներ: Հավասարաչափ շարժման հավասարումը և նրա
գրաֆիկը:

2. Անհավասարաչափ շարժում: Միջին արագու-
թյուն: Արագություն ավյալ մոմենտում: Հավասարա-
չափ փոփոխական շարժում: Արագացում: Հավասարա-
չափ փոփոխական շարժման արագություն և ճանապարհ-
հի բանաձևերը: Այդ շարժման մասնավոր դեպքը,
յերբ $\Lambda=0$.

3. Մարմինների ազատ անկումը ծանրության ուժի
ազդեցության տակ: Գալիլեյի փորձը: Ազատ անկման
արագացումը:

4. Շարժումների գումարումը: Յերկու հավասա-
րաչափ ուղղագիծ շարժումների գումարումը: Արագու-
թյունների գումարումը: Հորիզոնական ուղղությամբ
և հորիզոնական թեք նետած մարմնի շարժումը:

5. Նյուտոնի որոնքները: Նյուտոնի առաջին (իներ-
ցիայի) որոնքը: Մասսա: Մասսայի միավոր գրամ:
Մարմինների խտությունը: Նյուտոնի յերկրորդ որոնք-
ը: Ուժի միավոր-դին: Կապը գրամ ուժի և դինի միջև:

Նյուտոնի յերրորդ որոնքը:

6. Հավասարաչափ շարժում ըստ չրջանագծի: Գծային
արագություն: Գաղափար անկյունային արագության
մասին: Կենտրոնաձիգ ուժ և նրա բանաձևը (առանց ա-
պացույցի): Կենտրոնախույս ուժ:

7. Նյուտոնի տիեզերական ձգողության որոնքը:
Մարմնի կշռի կախումը աշխարհագրական լայնու-
թյունից:

8. Ուժը վորպես վեկտոր: Ուժերի գումարումը և
վերլուծումը: Զուգահեռ ուժերի գումարումը և վերլու-
ծումը: Ծանրության կենտրոն և նրա վորոշելու յեղա-
նակները: Մարմինների հավասարակշռությունը և դրա
դեպքերը:

9. Մենխանիկական աշխատանք և նրա չափումը:
Շարժման խոչընդոտների միջավայրի դիմադրություն
և չիում: Աշխատանքի միավորներ (կիլոգրամմետր,
երգ, ջոուլ): Հզորություն: Հզորության միավորներ
(ձիու ուժ, վատտ, կիլովատտ): Կինետիկ և պոտենցիալ
էներգիա: Կենդանի ուժի բանաձևը: Եներգիայի պահ-
պանման և փոխակերպման որոնքը:

Պարզ մեխանիզմներ:

2. ՀԵՂՈՒԿՆԵՐ ՅԵՎ ԳԱԶԵՐ

1. Ճնշման ուժ և տեսակարար ճնշում: Տես. ճնշման
միավոր-տեխնիկական միջնորոտ ($\left| \frac{\text{kg}}{\text{cm}^2} \right|$): Թրթռա-

վոր տրակտորի և տանկի տեսակարար ճնշումը:

2. Պասկալի որոնքը հեղուկների և գազերի վերա-
բերյալ: Զրաբաշխական մամուլ: Հեղուկի ճնշման ա-
նոթի հատակի և պատերի վրա: Սեգներյան անիվ:
Զրային սուրբիններ: Հաղորդակից անոթներ:

3. Միջնորոտային ճնշում: Բարոմետրներ՝ սնդի-
կային և մետաղյա: Բարոմետրների կիրառությունները:
Ոդային և ջրային պոմպեր: Մանոմետրներ՝ բաց սնդի-
կային և մետաղյա:

4. Հեղուկների և գազերի ճնշումը ներքևից դեպի
վերև: Արքիմեդի որոնքը հեղուկների և գազերի վերա-
բերյալ: Մարմինների լողալը: Արեոմետրներ: Նավեր և
սուզանավեր: Դիրքիաբլ. տերոստատ:

3. ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

1. Նյութի մոլեկուլային կազմութիւնը: Ատոմ, մոլեկուլ: Միջմոլեկուլային տարածութիւն: Հարակցական ուժերը պինդ, հեղուկ և գազային վիճակներում:

Մակերևութային լարվածութիւն: Պլատոյի փորձը: Մենիսկներ: Մազականութիւն և նրա նշանակութիւնը բնութիւն մեջ:

2. Դիֆֆուզիայի յերևույթը պինդ, հեղուկ և գազային մարմիններում: Ոսմոս: Մոլեկուլների շարժումը: Բրոունյան շարժում: (Մոլեկուլների շարժման արագութիւն կախումը ջերմաստիճանից):

Բոյլ-Մարիոտի որենքը:

4. ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ

1. Մարմինների ջերմային ընդարձակումը: Ջերմաչափ՝ սնդիկի և սպիրտի: C և K չկալաները: Մարմինների գծային և ծավալային ընդարձակման բանաձևերը: Կապը գծային և ծավալային ընդարձակման գործակիցների միջև:

2. Գաղափար նյութի մոլեկուլային-կինետիկ տեսութիւն մասին: Գե-Լյուսակի որենքը: Բոյլ-Մարիոտի և Գե-Լյուսակի միացյալ որենքը: Բացարձակ ջերմաստիճան:

3. Ջերմութիւն քանակի չափումը: Մեծ և փոքր կալորիա: Նյութի տեսակարար ջերմունակութիւն և նրա վորոշելու յեղանակը: Վառելանյութերի ջերմարար ընդունակութիւնը:

4. Ջերմութիւն տարածումը: Ջերմհաղորդականութիւն: Ջերմութիւն լավ և վատ հաղորդիչներ: Կոնվեկցիա: Կոնվեկցիոն յերևույթներ բնութիւն մեջ: Ճառագայթում և ճառագայթների կլանում:

5. Հալում և պնդացում: Հալման կետ: Հալման զրաֆիկը: Հալման կետի կախումը ճնշումից: Ծալալի փոփոխվելը հալման ժամանակ: Հալման ջերմութիւն:

6. Գոլորշիացում: Յեռում և ցնդում: Յեռման կետի կախումը ճնշումից: Պապինի կաթսան: Գոլորշիացման ջերմութիւն:

7. Գոլորշիների հատկութիւնները: Տարածութիւնը հագեցնող և չհագեցնող գոլորշիների հատկութիւնների համեմատումը: Կրիտիկական վիճակ: Գազերի հեղուկացումը: Կրիտիկական ջերմաստիճան: Հեղուկ ոգի կերտութիւնները: Բացարձակ և հարաբերական խոնավութիւն: Յոգի կետ: Խոնավութիւն վորոշելը: Խոնավաչափեր:

8. Ջերմային իներցիայի փոխարկեպումը մեխանիկականի և ընդհակառակը: Ջերմութիւն մեխանիկական համարժեք (եկվիվալենտ): Ջաուլի փորձը:

9. Ջերմային մեքենաներ: Շոգեմեքենայի կազմութիւնը և գործողութիւնը: Շոգեատուրիչներ: Ներքին այրեցման մեքենաների կազմութիւնը:

Ջերմային շարժիչների ոգտակար գործողութիւն գործակիցները (KПД):

5. ՏԱՏԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ. ՉԱՅՆ

1. Ճոճանակի շարժումը: Ճոճման պարբերութիւն (պերիոդ), ամպլիտուդ: Մաթեմատիկական ճոճանակի բանաձևը (առանց ապացոյցի):

Դեֆորմացիայի տարածվելը առաձգական միջավայրերում: Լայնական և յերկայնական տատանումներ: Տատանումների թիվը մեկ վայրկյանում (հաճախակիութիւն): Կապը տատանումների տարածման արագութիւն, ալիքի յերկարութիւն և հաճախակիութիւն միջև:

2. Չայն: Չայնի տարածման արագութիւնը տարբեր միջավայրերում: Չայնի ուժ և բարձրութիւն: Ալիքների անդրադարձում: Չայնական ալիքների ինտերֆերենց: Կանդուն ալիքներ: Չարկումներ: Չայնի յերանդ (տեմբլը): Չայնական ռեզոնանս: Մեխանիկական ռեզոնանս և նրա նշանակութիւնը տեխնիկայում: Չայնական տատա-

նումների գրանցումն ու նրանց վերադարձումը: Գրամոֆոն: Յերաթշտական գործիքներ:

6. ԵԼԵԿՏՐՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ելեկտրականացում շփումից: Յերկու տեսակի լիցքեր: Ելեկտրականության ատոմիստական բնույթը (ելեկտրոն և պրոտոն): Լիցքերի փոխազդեցությունը: Կուլոնի որենքը: Լիցքի ելեկտրոստատիկ միավոր: Կուլոն:—Ելեկտրական դաշտ: Պոտենցիալ: Ելեկտրոստատիկություն: Դիէլեկտրիկներ: Ելեկտրոստատիկ ինդուկցիա: Կոնդեսատորներ:

2. Ելեկտրոլիտիկ զխսոցիացիա: Ելեկտրոլիզ Գալվանական ելեմենտներ և նրանց գործողության սկզբունքը: Պղնձարջասպի և ծծմբաթթվի լուծույթների ելեկտրոլիզը: Փրագեյի որենքները: Բեվեռացում: Ալկալոսկատորներ: Ելեկտրոլիզի կիրառումը տեխնիկայում:

3. Ելեկտրական հոսանքն ըստ ելեկտրոնային տեսության: Հոսանքի ուժի միավոր—ամպեր: Հոսանքի լարվածություն: Լարվածության միավոր—վոլտ: Դիմադրություն: Դիմադրության միավոր Ոմ: Ոմի որենքը չզլթայի մի մասի և ամբողջ չզլթայի համար: Բեռնատառներ: Հաղորդիչների զուգահեռ և հաջորդական միացում:

4. Ելեկտրական հոսանքի աշխատանքը: Հոսանքի հզորություն: Վատտ, հեկտովատտ, կիլովատտ, կիլովատտ—ժամ: Ջաուլ—Լենցի որենքը Երկաշման լամպեր: Ապահովիչներ: Ելեկտրո-վառարան: Վոլտյան աղեղ:

5. Բնական և արհեստական մագնիսներ: Բեվեռների փոխազդեցությունը: Կուլոնի որենքը: Մագնիսական դաշտ: Մագնիսական ուժագծեր և նրանց պայմանական ուղղությունը: Մագնիսական ինդուկցիա: Մագնիսական սպեկտր: Յերկրագնդի մագնիսական դաշտը: Կողմնացույց:

6. Ուղղադիժ հոսանքի մագնիսական դաշտը: Ոջանահանի կանոնը: Սոլենոյդի մագնիսական դաշտը: Ելեկտրոմագնիս: Ելեկտրոմագնիսների կիրառությունը (ելեկտրական զանգ, Մորզեյի հեռագրապարատ): Հոսանքատար հաղորդչի չարժուժը մագնիսական դաշտում: Ջախ ձեռքի յերեք մատների կանոնը: Ելեկտրական չափողական գործիքների կազմությունը: Ելեկտրոմոտորի կազմության սկզբունքը:

7. Ելեկտրոմագնիսական ինդուկցիայի յերևույթը: Ինդուկցիոն հոսանքի առաջանալու պայմանները: Լենցի կանոնը: Աջ ձեռքի յերեք մատների կանոնը: Հաղորդիչ չրջանակի չարժուժը մագնիսական դաշտում: Ելեկտրոչարժ ուժի փոփոխվելը պտտման ժամանակ: Փոփոխական հոսանք և նրա գրաֆիկը: Փոփոխական հոսանքի ուղղումը կոլլեկտորի միջոցով: Հաստատուն հոսանքի դինամոմեքենա:

8. Ինքնիդուկցիա: Փուկոյի հոսանքներ: Հոսանքի տրանսֆորմացիա: Ռուսկորֆի կոճը: Տեխնիկական տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորների ողտակար գործողության գործակիցը (КПД):

7. ԼՈՒՅՍ

1. Լույսի տարածվելը: Լույսի արագության վորոչելը (ըստ Բյուրմերի): Մովերների և կիսաստովերների առաջանալը: Լույսի ուժ և նրա միավոր—միջազգային մոմ: Լուսավորվածություն: Լուսավորավծության միավոր—Լյուքս:

2. Լույսի անդրադարձումը: Անդրադարձման որենքները: Գոգավոր և ուռուցիկ հայելիներ: Գոգավոր հայելու բանաձևը: Պատկերների կառուցումը հարթ, գոգավոր և ուռուցիկ հայելիների միջոցով: Գոգավոր հայելիների կիրառումը տեխնիկայում և ռազմական գործում. (լուսարձակ, ազդանշանային լապտեր և այլն):

3. Լույսի բեկման որենքները: Յերեվույթներ, վորոնք բացատրվում են լույսի բեկման հիման վրա: Լրիվ

ներքին անդրադարձում: Ճառագայթի ընթացքը պրիզմայի միջոցով:

4. Վոսպնյակներ և նրանց տեսակները: Ճառագայթի ընթացքը վոսպնյակների միջոցով: Պատկերների կառուցումը վոսպնյակներում: Պրոեկցիոն և լուսնկարչական տպարատ: Լուպա, միկրոսկոպ բինոկլ, տելեսկոպ: Աչք: Կարճատեսություն և հեռատեսություն: Ակնոցներ: Կինեմատոգրաֆիայի հիմունքները:

5. Լույսի տարրալուծումը գույների: Սպեկտր: Գույների խառնելը: Լրացուցիչ գույներ: Յեռագույն տպագրություն: Սպեկտրների տեսակները: Ֆրաունհոֆերյան գծեր: Կիրխհոֆի որենքը: Սպեկտրալ անալիզ: Ուլտրա-մանիշակագույն և ինֆրա կարմիր ճառագայթներ ու նրանց հատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Соколов.—«Физика для педтехникумов». ч. I и II
2. Бачинский.—«Физика в трех книгах» кн. I, II и III
3. Фалеев и Перышкин.—«Курс физики» 8 год обуч.

Ք Ի Ս Ի Ա

Մարմին և նյութ. նյութերի փոփոխությունը— ֆիզիկական և քիմիական յերեվույթներ. խառնուրդ և քիմիական միացություն. քիմիական ռեակցիա:

Ջուրն, իրրև քիմիական միացություն: Ջրի տեսակները և նրա մաքրելը. թորում: Ջրի բաղադրիչ մասերը:

Ջրի տարրալուծելը:

Ջրածին. նրա հատկությունները և ստանալու յեղանակները. նրա կիրառումը: Շառաչող գազ:

Պարզ և բարդ նյութեր. տարրեր. տարրերի յերկու դիսալոր խմբերը. մետաղներ և մետալոյդներ:

Նյութի պահպանության որենք:

Ոդ: Ոդն իրրև խառնուրդ. նրա բաղադրիչ մասերը. թթվածին, նրա ստանալը լաբորատոր և տեխնիկական յեղանակներով. ոգտագործումը. ոքսիդացում և վերականգնումն (րեդուկցիա):

Ատոմներ և մոլեկուլներ: Ատոմական և մոլեկուլային քաշ. ֆորմուլներ, ֆորմուլների և հավասարության հաշվելը:

Ոքսիդներ. թթվածին և հիմնային ոքսիդները:

Թթուներ. հիմքեր. նրանց բնորոշումը:

Աղեր. նրանց բնորոշումը: Աղեր ստանալու հինգ հիմնական յեղանակները.—

1. մետաղի և թթվի փոխներդործությամբ.

2. մետաղի ոքսիդի և թթվի ներգործությամբ.

3. հիդրոքսիդի և թթվի ներգործությամբ.

4. հիդրոքսիդի և անհիդրիդի փոխներգործությամբ.

5. Երեսիցի և անհիգրիգի փոխներդործությամբ:

Աղեր ստանալու այլ յեղանակներ:—

1. Թթվի և աղի փոխադրեցությամբ.

2. մետաղի և աղի փոխադրեցությամբ.

3. աղերի փոխադրեցությամբ:

Թթու և չեղոք աղեր. նրանց բնորոշումը:

Արժեքականություն և նրա բնորոշումը. փոփոխա-
կան արժեքականությունը: Չեղոքացման ռեակցիա:

Սեղանի աղ. նրա բաղադրիչ մասերը:

Քլորաջրածին և նրա ստանալն ու հատկություն-
ները: Քլորաջրածնից քլոր ստանալու յեղանակները:

Քլորի հատկությունները և ոգտագործումը:

Բրոմ, յոդ և ֆտոր. նրանց ստանալու յեղանակները
և ոգտագործումը. նրանց և քլորի նմանություններ:

Լուծույթներ. հալեցած լուծույթներ. ջերմության
և լուծիչների քանակության դերը հալեցած լուծույթ-
ների համար. յերեւույթները լուծույթներ պատրաստե-
լիս: Բյուրեղացում: Նորմալ և դեգրիւորմալ լուծույթ-
ներ:

Ելեքտրոլիտներ և վոչ ելեքտրոլիտներ. ելեքտրո-
լիդ. իոններ. դիսսոցում. լուծույթների մեջ կատար-
վող ջիմիական ռեակցիաների բացատրությունը: Չեղո-
քացման ռեակցիա:

Ծծումբ. նրա հատկությունները և ոգտագոր-
ծումը:

Ծծմբային անհիգրիգ. ծծմբային թթու. ծծմբա-
կան թթու. նրա ստանալու կամերային և կոնտակտ յե-
ղանակների հիմնական սկզբունքները: Սուլֆատներ և
նրանց գործածումը:

Ծծմբաջրածին. նրա ստանալը և հատկությունները.
նրա աղերը—սուլֆիտներ:

Թթվածնի և ծծմբի նմանությունները:

Ազոտ. նրա ստանալու յարորատոր և տեխնիկական
յեղանակները. ազոտի հատկությունները. ազոտաջրա-
ծին և նրա հատկությունները:

Ազոտի թթվածնային միացությունները: Ազո-

տաթթու և նրա աղերը. ազոտաթթվի և նրա աղերի
կիրառումը: Ազոտաթթվի և մյուս թթուների փոխադ-
րեցությունը մետաղների (որինակ ցինկի և յերկաթի)
հետ. ազոտի չրջանառությունը բնության մեջ: Կապ-
ված ազոտի ոգտագործումը. Հաբերի յեղանակը:

Եկզոդերմ և ենտոդերմ ռեակցիաներ:

Փոսֆոր. նրա ստանալու յեղանակը. Փոսֆորի գոր-
ծածությունը. Փոսֆորի թթվածնային միացություն-
ները. Փոսֆորական անհիգրիգ և Փոսֆորաթթու. Փոս-
ֆատներ և սուպերֆոսֆատ:

Ազոտի և Փոսֆորի նմանությունները և նրանց
տարբերությունը քլորի և թթվածնի խմբերից:

Ածխածին. ածուխ, գրաֆիտ, ալմաստ: Ածխածինը
բնության մեջ. որդանական և անորդանական նյութեր:

Ածխածնի գործածությունը:

Ածխածնի թթվածնալոր միացությունները. չմու,
նրա հատկությունները. ածխաթթու գազ և նրա հատ-
կությունները: Ածխածնի չրջանառությունը բնության
մեջ. Ածխաթթու և նրա աղերը: Ածխաթթուն իբրև
թույլ թթու: Ելեկտրոլիտների դիսսոցման աստիճաննե-
րը և նրանց ելեկտրոհաղորդությունը: Աղերի հիգրոլի-
զը և նրանց ներգործությունը ինդիկատորների վրա:
Կարբոնատներ. սոդա, պոտաշ և կրաքար: Սոդա ստա-
նալու յեղանակները (գլխավորապես Սոլվեյի):

Ածխածնի ջրածնային միացությունները. մետան
և ացետիլին: Նրանց կիրառումը: Որդանական նյութերի
չոր թորումը. քարծխի թորման պրոդուկտները՝ վառե-
լանյութ, նավթ:

Սիլիցիում— սիլիկական անհիգրիգ (կվարց, կալ-
ծաքար), սիլիկաթթու և սիլիկատներ. լուծվող ապակի,
սովորական ապակի և ցեմենտ: Կոլլոյդներ և նրանց
հատկությունները:

Ելեմենտների դասակարգումը. մետաղներ և մետա-
լոյդներ. մի քանի մետաղների մետաղական և մետալ-
լոյդական հատկությունները. ելեմենտների հատկու-
թյունների փոփոխության կախումն ատոմական կշռից:

Մենդելևի որենքը: Մենդելևի՝ տարրերի պարբերական համակարգությունը: Ատոմի կազմությունը:

Մետաղները և նրանց հատկությունները: Թեթև և ծանր մետաղներ: Համաձուլվածքներ: Մի քանի կարևոր համաձուլվածքներ. չուգուն, արույր, դյուրալյումինիում և այլն:

Մետաղների իրար դուրս մղելն այլ միացություններին. յարման շարք: Բնածին մետաղների հանքեր: Հանքերից մետաղներ ստանալու ընդհանուր յեղանակը: Ալկալիական և հողալկալիական մետաղներ Na, K, Ca:

Գունավոր մետաղներ՝ պղինձ և ալյումին. ազնիվ մետաղներից—արծաթ: Ֆերկաթ և նրա վերամշակումը հանքերից. հնոցային պրոցեսներ:

Բետեմեր, թումասի և Մարտինի յեղանակներ*):

*) Սույն ծրագրերը մշակված են Լ. Ժ. Կ. Ժրադրա-մեթոդական կայանի կողմից:

Ց Ա Ն Կ

1. Հայոց լեզու	3
2. Ռուսաց լեզու	6
3. Հասարակագիտություն	7
4. Մաթեմատիկա	21
5. Ֆիզիկա	23
6. Քիմիա	35



ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՀ Ազգային գրադարան



NL0237476

54.037
